Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի

Հարցաշարերի պատասխաններ

XI դասարան

1.Այս «հմուտ հանճարեղ լոռեցին» , «Ամենայն հայոց բանաստեղծը» իր շքեղ պոեզիայով միշտ արթուն է պահում մեր միտքը, մեր սիրտը: Անմրցելի է Թումանյանը բոլոր ժանրերում՝ մանկական բանաստեղծություն, հայրենասիրական քնար, բանաստեղծական բազմաթիվ ապրումներ, պոեմներ, լեգենդներ, բալլադներ, պատմվածքներ, քառյակներ.....

«Այո՛, Թումանյանը մեր ժողովրդի գանձն է ու պարծանքը, մեր գրականության զարդն ու փառքը», - հավաստում է նրա մեծ բարեկամը, գաղափարակիցն ու մտերիմը՝ Ավետիք Իսահակյանը: Թումանյանը դարձավ մեր ժողովրդի «ազնիվ կենսագիրը», նրա պատմության բանաստեղծական վավերացնողը:

«Թմկաբերդի առումը» պոեմը գրվել է 1902-ին՝ Աբասթումանի փառահեղ աշնանը, երբ Թումանյանը անձեռակերտ արվեստով մշակեց իր մյուս պոեմները: Պոեմի նյութը Թումանյանը լսել էր Ջավախքի ծերերից, եղել էր Թմուկ բերդի ավերակներում, զարմացել, ահաբեկվել, զայրացել.... Նյութը շատ պարզ է: Նադիր շահը հարձակվում է Թմուկ բերդի վրա . բերդի տիրակալ Թաթուլը անպարտելի է. շահը չի կարող ուժով հաղթել Թաթուլին և դիմում է նենգության: Նա որոշում է գայթակղել Թաթուլի գեղանի կնոջը՝ «խոստանում նրան ամեն,ամեն բան, ինչ որ կարող էր խոստանալ շահը, երկրակալ շահը՝ իր սիրած կնկան»: Եվ ահա աշուղը Թմուկ բերդում է, ամեն օր երգում է շահի «սերը», գովաբանում Թմկա չքնաղ տիրուհուն՝ «Քո ճակատին թագ է վայել, լինիս շքեղ թագուհի»: Փառասիրությունը հաղթում է սիրուն, և տիրուհին հարբեցնում է հաղթանակով վերադարձած զորքին ու բացում դարպասները....

Սակայն հաջորդ օրը «սևաչյա մատնիչը» խորապես գիտակցում է իր արարքի ողջ ստորությունը և պարսավում է շահի ստոր արարքը՝ . «Չէր եղել կյանքում երբեք խաբեբա, կնոջ մատնությամբ ամրոց չէր առել»: Գազազած Նադիրը նրան ցած է գլորում ժեռ քարից:

Գել ու աղվես եկան հանդից
Ագահ սիրտը սիրտը լափեցին,
Ցին ու ագռավ իջան ամպից,
Սև աչքերը հանեցին:

Որովհետև փառասիրության և ագահության կրողները(այս մահացու մեղքերը հիշատակված են Սուրբ Գրքում) աչքերն ու սիրտն են. մահացու մեղքեր, որոնք պղծում ու ապականում են ամեն գեղեցիկը, մղում են նենգության ու ստորության: Պոեմի թեմատիկայի մեջ մեծ պոետը առանձնացնում է աններելի մեղքը՝ դավաճանությունը, որը փառասիրության և ագահության արդյունք է:

Միաժամանակ շեփորում է ազնիվ ու արդար պայքարը, «մարդ գալու և մարդ գնալու» անբեկանելի հավատը, անեծքով հիշվող վատ գործը և օրհնանքով հիշվող լավ գործը:

2.Միամանթոն (Ատոմ Կարճանյանը) հայ քնարերգության պայքարի փողհարն է:
Ծնվել է Խարբերդի Ակն «ամենագեղատեսիլ» քաղաքում՝ «հայրեններու բուրաստան»-ում:
Վկայություններն ասում են՝ «ակնեցին բանաստեղծ կըծնի» : Ահա այսպես բանաստեղծ է ծնվել նաև Աստվածատուր-Ասատուր-Ատոմ Յարճանյանը, որը հետագայում կնքվել է Միամանթո՝ իր սիրելի ուսուցիչ, մեծ բանահավաք ու գրագետ Գարեգին Սրվանձտյանցի կողմից: Այս հրաշք քաղաքում՝ Եփրատի ափերի մոտ է եղել ապագա քերթողի տունը, նրա արշալույսի և հույսի տունը: «Աստղածորան գիշերների» անուրջների և« սահելավազ» Եփրատին ունկնդրելով է անցել նրա մանկությունը:
Յարճանյանների ընտանիքը բանաստեղծական հակում ուներ. տատը կատարյալ ասացող էր, մայրը՝ հրաշալի երգող, երբեմն ինքն էր օրորոցայիններ հորինում, եղբայրը՝ Վահանը, նույնպես բանաստեղծ էր: Սովորել է Ակնի Ներսիսյան դպրոցում, այնուհետև Պոլսում՝ Գում-Գափուի Միրիճանյան դպրոցում: Այնուհետև Սկյուտարի Ռեթեոս Պերպերյանի դպրոցում: 1895-ի ջարդերը ստիպում են Յարճանյաններին տեղափոխվել Պոլիս: Հետո Պերպերյանի հորդորով ու խնդրանքով Ատոմը հեռանում է Եգիպտոս: Հետո մեկնում է Ժնև և սովորում տեղի քոլեջի ծաղկաբուծական բաժնում: Հետո՝ Փարիզ՝ Սորբոնի համալսարան:
Միամանթոն կապվում է հայ ուսանողական միությանը, որը փորձում էր օգտակար լինել արյան մեջ խեղդվող հայրենակիցներին: 1898-ին «Վաղվան ձայն» պարբերականում տպագրվում է Միամանթոյի առաջին բանաստեղծությունը՝ «Աքսորված խաղաղություն», որը ընկերներին հայտնի էր «Կոտորած» , իսկ հետո՝ «Մահվան տեսիլ» խորագրով:
Սկսվում են սարսափելի, ահեղամռունչ ջարդերը, և Միամանթոն դառնում է ականատես ու ունկնդիր մահվան, լացի,սուգի: Այդ ահասարսուռ իրողության նկարագրությունն է «Պարը» քերթվածը .անծանոթ գերմանուհին սոսկումով պատմում է թուրք խուժանի գազանային խելագարությունը, երբ քսան հարսներին հրամայում են պարել, մերկացնում են, քարյուղ լցնում ու կրակ տալիս և հրճվում նրանց ցնցող գալարումներից: Նա պատմում է «մարդուն չարիքը մարդուն դեմ, թո՛ղ աշխարհիս բոլոր սրտերն իմանան....»: Հեղինակը ցանկանում է սթափեցնել անտարբեր մարդկությանը, որ չի տեսնում իր կարճատև կյանքի ուղին արյունով ու մարդասպանությամբ անցնող բորենուն ,և իր ծվատված սրտի ամբողջ ցասումով պայթեցնում է մարդկության խլացած ունկերը՝« Ո՜վ մարդկային արդարություն , թող ես թքնեմ քո ճակատիդ...»

Իր դարաշրջանի մարդկությանը Սիամանթոն բնութագրում է իբրև «չարազոր օրենքներու և անչափելի անարդարության մարդկություն»: Ահա հենց այս ահավոր նախճիրի զոհն է դառնում «կարապանման էակը»՝ պատգամելով՝.

Ես երգելով կուզեմ մեռնիլ...և երազում է.
Ափ մը մոխի՛ր աճյունիս հետ, Հայրենի տուն,
Ափ մը մոխիր քու մոխիրեդ, ո՞վ պիտի բերե ...իմ սրտիս վրա ցանելու....

Կարո՞ղ ես պատասխանել հանճարին՝ «նոր դարերի մարգարեին», «առնական խիզախության փողհարին», «նոր շրջանի Նարեկացիին»....

3.Հայ գրականության «Վարպետ», «հայ երգի նահապետ» Ավետիք Իսահակյանը անբեկանելի սիրով ու ջերմությամբ է գրում հայրենիքի մասին: «Ռավեննայում» գողտրիկ բանաստեղծությունը հայրենիքի հավերժության գաղափարն է փառաբանում՝ ի դեմս Արարատի, որի ճակատին բեկվել են անթիվ կայծակների սրեր, մահախուճապ սերունդներ են նայել գագաթին ու անցել, բայց Արարատը իմաստուն ճակատը դեմ է տվել արհավիրքներին ու ավելի ամրացել. սերունդներ կգան ու կանցնեն, բայց Արարատ-հայրենիքը անմահ է, անխախտ:
«Հայրենիքիս» բանաստեղծությունը խորհրդածություն է հայ ժողովրդի անցած ճանապարհի մասին, նա տեսնում է իր հայրենիքի անմահությունը, ցորենի ծփուն արտերը երգում են հայերեն, նոր Հայաստանի անբեկանելի ծաղկումն է տեսնում բանաստեղծը և այդ ծաղկումի բույրով սրբագործված «քաղցր ու սրտաբուխ» լեզվի հնչյուններն են թևածում գալիք դարերում: Հրաշալի է «Հայրենի հողը» բալլադը: Արևելյան գեղեցիկ լեգենդը Իսահակյանի գրչի տակ դարձել է մի հրաշալի վիպերգ-սիրերգություն հայրենի հողի անպարտելիության ու հավերժության մասին: Ոչ մի վիրավորանք ի զորու չէ խլացնելու հայրենի հողի կանչը, որովհետև՝

Այդ հողն է նրան ծնել ու սնել,
Իր մայրն ու հայրը այդ հողն են դառել,
Եվ հայրենիքն է , ժողովուրդն անմեռ,
Եվ նախնիքները, որ հող են դառել:

Մնացածի մասին պետք է գրի մասնակիցը:

4. Հայ գրականության գրական ֆիդային եղեռնազարկ բանաստեղծն է՝ Դանիել Վարուժանը, ով դարձավ իր «ցեղին փողհարը»՝ երգելով ուժ ու գեղեցկություն, սեր ու հրճվանք՝ հակադրվելով ժամանակի անմարդկային ոճրագործությունը: Խիզախ ֆիդայու նման հնչոցրեց ցեղի անմահության երգը՝ հային երգը՝ պատգամելով պտղաբերում ու սիրերգություն, առատություն ու օրհներգություն: «Ցեղին սիրտը» շարքում հայրենասիրությունը արտահայտում է հոգեկան ողբերգություն: Որպես բնաբան ծառայող «Զոն» բանաստեղծությունը արդեն իսկ ներկայացնում է ֆիդայի

բանաստեղծի հավատամքը՝ «Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի....»: Ազգային կոխկրտված արժանապատվությունը վրեժի և ատելության շեշտեր է ավելացնում նրա երգերին, և մենք շոշափելիորեն զգում ենք ցեղին սրտի արյունոտ տրոփյունը: Եվ ցեղի փողհարը գնում է դեպի «Գինու նման անկեղծ և հզոր» ժամանակներն ու մարդկանց՝ հիշեցնելով մարդկայինն ու մարդուն: Նա մերժում է խարդավանքը, գազանությունը, արյունը: Եվ այստեղ հասկանալի է դառնում բանաստեղծի «ցավն հաճույքին և հաճույքները ցավին» պատմելու նրա անհուն տենչը: Մահվան դեմ դիմաց կանգնած բանասեղծը երգում է հացը ,ինչպես հպարտ հայդուկը՝ իր զենքը: Մնացյալը՝ մասնակիցը :

Գնահատման չափանիշներ

XI դասարան

1-ին հարց՝ ենթահարց 1. 2 միավոր,
ենթահարց 2. 2 միավոր,
ենթահարց 3. 1 միավոր:

2-րդ հարց՝ ենթահարց 1. 1 միավոր,
ենթահարց 2. 1 միավոր,
ենթահարց 3. 2 միավոր,
ենթահարց 4. 1 միավոր:

3-րդ հարց՝ ենթահարց 1. 1 միավոր,
ենթահարց 2. 1,5 միավոր,
ենթահարց 3. 2 միավոր,
ենթահարց 4. 0,5 միավոր:

4 րդ հարց՝ ենթահարց 1. 1 միավոր,
ենթահարց 2. 1 միավոր,
ենթահարց 3. 3 միավոր:

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան